ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժին

ք. Երևան,0078, Հալաբյան 41ա, հեռ.060713476

Ելք N 0028773560, 26 հոկտեմբերի 2026 թ.

Արտակ Անդրանիկի Համազասպյան
Ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Սեբաստիա Փ.,
16 Շ., Բն. 9

Նարինե Խաչատրյան Վիգենի
ք. Երևան, Կենտրոն, Սայաթ-Նովայի Պ.,Շենք 40/1

ՈՐՈՇՈՒՄ

Կատարողական գործողությունները հետաձգելու մասին

26 հոկտեմբերի 2026 թ. **ք. Երևան**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժին, Գլխավոր խորհրդատու արդարադատության փոխգնդապետ Սերժիկ Հակոբյանս ուսումնասիրելով թիվ **13428158** կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից **07 ապրիլի 2025 թ.** տրված թիվ **ԵԴ2/3535/02/25** կատարման ենթակա ակտի համաձայն պետք է՝ Արտակ Անդրանիկի Համազասպյանից հօգուտ Նարինե Վիգենի Խաչատրյանի՝ որպես 28.06.2023 թվականին ծնված՝ Լեո Արտակի Համազասպյանի և 27.11.2019թ.-ին ծնված՝ Դանիել Համազասպյանի ապրուստի միջոց, բռնագանձել ալիմենտ Արտակ Անդրանիկի Համազասպյանի ամսական վաստակի և (կամ) ամսեկան այլ եկամտի հանրագումարի մեկ երրորդը, մինչև երեխաների չափահաս դառնալը կամ մինչև չափահասության հասնելը երեխաների լրիվ գործունակություն ձեռք բերելը:

Ալիմենտի բռնագանձումը սկսել 01.02.2024 թվականից:

Արտակ Անդրանիկի Համազասպյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 48,880 (քառասունութ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ որպես ալիմենտի հայցապահանջի մասով պետական տուրքի գումար:

Պատասխանող Արտակ Անդրանիկի Համազասպյանից հօգուտ Նարինե Վիգենի Խաչատրյանի բռնագանձել 20,000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես սույն գործով հայցադիմումի ներկայացման համար հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարի հատուցում:

Պատասխանող Արտակ Անդրանիկի Համազասպյանից հօգուտ Նարինե Վիգենի Խաչատրյանի բռնագանձել 150,000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Սույն գործով Դատարանի 07.04.2025թ.-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Իրականացված կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել պարտապան Արտակ Համազասպյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք.Երևան, Սեբաստիա փ. 16շ. 9 բնակարանի վրա և կատարողական վարույթի կողմերին առաջարկվել է միջնորդություն ներկայացնել փորձաքննություն անցկացնել՝ շուկայական արժեքը պարզելու համար: Պահանջատեր Նարինե Խաչատրյանը միջնորդություն է ներկայացրել փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ և փոխանցել փորձաքննության անկացման ծախս 13.500 ՀՀ դրամ:

Սույն կատարողական վարույթի շրջանակներում նշանակվել է փորձաքննություն, որի իրականացման արդյուքում Ծառայություն է մուտքագրվել՝փորձագետի գնահատման եզրակացություն՝ ըստ որի ք.Երևան, Սեբաստիա փ. 16շ. 9 բնակարանի շուկայական արժեքը 10.09.2026թ. դրությամբ կազմում է **40.300.000 ՀՀ դրամ:**

Կատարողական վարույթի շրջանակներում պարզվել է, որ պարտապանը **ք.Երևան, Սեբաստիա փ. 16շ. 9 բնակարան** հասցեում ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքում ունի բաժնային սեփականություն և նրա բաժինը ընդհանուր գույքում որոշված չէ: Քաղաք **Երևան, Սեբաստիա փ. 16շ. 9 բնակարան** հասցեում գտնվող գույքի ընդհանուր համատեղ սեփականատերեր են հանդիսանում՝ **Սմբատ**

Երեմի Համազասպյանը, Գայանե Սմբաթի Համազասպյանը, Անդրանիկ Սմբատի Համազասպյանը, Արտակ Անդրանիկի Համազասպյանը, Աննա Արտակի Համազասպյանը, Գյուլնարա Արտավազդի Գևորգյանը:

26.09.2026թ. որոշում է կայացվել <<Ընդհանուր գույքի վրա արգելանք դնելու և այն իրացնելու մասին>>, որով հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ է սահմանվել 26.10.2026թ.: Միաժամանակ ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի համասեփականատերերին ծանուցվել է <<Կատարողական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ընդհանուր սեփականության մասնակիցների կողմից պարտապանի բաժնեմասի գնելու նախապատվության իրավունքի մասին:

22.10.2026թ. հ.2319516 դիմումով Գայանե Սմբաթի Վեստը (**Գայանե Սմբաթի Համազասպյան)** միջնորդել է գնել պարտապան Արտակ Համազասպյանի բաժնեմասը և Ծառայության դեպոզիտ հաշվին վճարել է ընդհանուր գույքի շուկայական արժեքից Արտակ Համազասպյանի 1/6 բաժնեմասի երեք տոկոսը (202.000 ՀՀ դրամ):

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 22-րդ, 50-րդ հոդվածներով և 54-րդ հոդվածի 4 մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 13428158 կատարողական վարույթով իրականացվող կատարողական գործողությունները հետաձգել մեկ ամիս՝ 25.11.2026թ.ժամկետով: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ սահմանել **26.11.2026թ.**:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:
«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: Հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Գլխավոր խորհրդատու՝ Ս. Հակոբյան

ստորագրություն՝